ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ
ԿԵՆՏՐՈՆ ՀԿ/

ԹԵՄԱ՝ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Հետազոտող ուսուցիչ՝ Գոհար Պետրոսյան
< ՀՀ Շիրակի մարզ Մուսայելյանի Ռ.Առաքելյանի անվան միջնակարգ > ԴՊՐՈՑ
ՊՈԱԿ

Մենթոր ուսուցիչ՝
ԿԱՐԻՆԵ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 1. «Ցեղակրոնությունը որպես թյուրընբռնված գաղափարախուսություն և որպես ազգային արժեքի ձևավորում դասավանդման ընթացքում»

ԳԼՈՒԽ 2. Արժեհամակարգի ձևավորումը դասավանդման ընթացքում

ԱՄՓՈՓՈՒՄ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Խնդիրները՝ արժեհամակարգի բացակայությունը, բարոյական բնութագրի բացակայությունը որոշ դեպքերում,փոխազդեցությունների և շձումների արդյունքում ազգային դիմագիծը կորցնելու վտանգը, հակահայկականությունը, պարտվողի հոգեբանությունը,հայրենասիրության և ազգասիրության նվազումը:

Նպատակը՝ազգային միասնության գաղափարի ձևավորումը, ազգասիրության, լեզվի, մշակույթի, պատմական հիշողության, պատմական մտածողության, կրոնի գաղափարի ձևավորումը: Ժամանակակից երևույթների հետ շփումը ենթադրում է հարմարեցում, բայց դա չի խանգարում պահպանել յուրահատկությունն և ինքնատիպությունը, որով և ազգը առանձնանում է մյուսներիցայնպես, ինչպես անհատը:Արժեհամակարգում կարևոր տեղ են զբաղեցնում հայրենասիրությունը և ազգասիրությունը:Առանց հայրենասիրության չկա հայյրենիք:Այս երկու արժեքների պահպանումն ու կիրառումն է ապահովում ազգի հետագա ընթացքը:

Հայրենիքը գոյատևում է հայրենասիրությամբ, և կործանվում է դրա պակասից:

Օտար ուժերը իրենց թիրախ հանդիսացող ազգին խփում են հենց ազգային արժեքներից, ջանում ջրիկացնել, լուծել օտար տարրերում:

Մեր օրերում բավական հաճախ կարելի է լսել Ազգային արժեք գաղափարախոսություն արտահայտությունը, որն օգտագործվում է թե գիտական շրջանակներում, թե հասարակական միջավայրում: Այն ավելին է քան սոսկ բառակապակցությունը, հոգևոր-մշակութային արժեքը:Հայ ազգային գաղափարախոսությունը հին է այնքան, որքան որ հայ ժողովուրդը:Հայ ժողովուրդը կատարյալ կերպով,դարերի ընթացքում մշակեց և լրացրեց իր գաղափարախոսությունը:Նրա մշակման գործում խոշոր, առանցքային դեր են խաղացել երեք անհատներ՝ Մ.Խորենացին, Ն.Ադոնցը և Գ.Նժդեհը: ՈՎ Է Գ.ՆԺԴԵՀԸ: Արդյոք կա Գ.Նժդեհի կերպարը գերմանական, անգլական, ռուսական պատմագրությունում:Օրինակ՝ Գ.Նժդեհը գերմանացու Նիշցեն է, Բիսմարկն է,

անգլացու՝Քեմբեռլենն է կամ Նելսոնը, ռուսների համար Սուվորովը:Նժդեհը քաղաքական մտքի,ռազմական ոգու և Աստվածային ճշմարտության միակ և բացարջակ միավորումն է:Գ.Նժդեհը հայ ժողովրդին տվեց նոր վարքագիծ՝ նա մերժեց 600տ կամ 1000տարի առաջ գոյություն ունեցող այն հետևյալ վարքագիծը՝ աշխատանք-ընտանիք- եկեղեցի և առաջ քաշեց նոր ցեղ-հայրենիք-Արարիչվարքագիծը և այս մոդելը բարձրացրեց քաղաքակրթական նոր մակարդակի: Այս մոդելը պետք է դառնա առաջնային արժեք յուրաքանչյուր հայի համար և ապահովի հայի գոյությությունը աշխարհաքաղաքական այս նոր փոթորկի մեջ:

ԳԼՈՒԽ 1. «Ցեղակրոնությունը որպես թյուրընբռնված գաղափարախուսություն և որպես ազգային արժեքի ձևավորում դասավանդման ընթացքում»

Հայոց պատմության ալեծուփ օվկիանում, մեր նվիրական հերոսների շարքում, իբրև գաղափարական և կազմակերպական առաջնորդ վեր է հառնում Գարեգին Նժդեհի կերպարը։ Նժդեհը (1886-1955) մեր պատմության այն եզակի դեմքերից է, որի մեջ ներդաշնակորեն միաձուլվում են զինվորականն եւ մտածողը, ազգային բարոյախոսն ու քաղաքական գործիչը և որն իր ՝ հիրավի պատմաստեղծ կյանքով , հաստատաբար դասվում է հայոց առաջնագույն մեծերի շարքը

Նժդեհը(Գարեգին Տեր-Հարությունյան) ծնվել է 1886թ-ի հունվարի 1-ին Նախիջևանի գավառի Կզնութ գյուղում։Մանուկ հասակում կորցրել է հորը(հայրը՝ Եղիշը, գյուղի քահանան էր) և մնացել է մոր՝ Տիրուհու խնամքին ։ Ընտանիքում եղել են 4 երեխա, ինքը փոքր է ։ Սկզբնական կրթություն ստացել է Նախիջևան քաղաքի ռուսական դպրոցում, ապա՝ Թիֆլիսի ռուսական գիմնազիայում, որտեղ սովորելու ընթացքում էլ , 17 տարեկան հասակից, միացել է հայ ազատագրական շարժմանը։ Այնուհետև անցել է Պետերբուրգ և 2 տարի տեղի համալսարանի իրավաբանական բաժնում սովորելով՝ լքել է համալսարանը և ամբողջովին նվիրվել հայ հեղափոխության գործին՝ ցարիզմի ու սուլթանականության դեմ։

1907-1908թթ-ին մտնում է Հ.Յ.Դ. շարքերը և իբրև կուսակցական նշանավոր գործիչ Սամսոն Թադևոսյանի օգնական, մասնակցություն բերում պարսկական հեղափոխական շարժմանը։ Զենք և ռազմամթերք տեղափոխելու համար, Նժդեհը 1909-ին վերադառնում է Կովկաս և ձերբակալվում ցարական իշխանության կողմից։ Երբ 1912թ-ին սկսվեց Բալկանյան առաջին պատերազմը , հայերը Թուրքիայի դեմ կռվելու համար բուլղարական բանակի կողքին ստեղծեցին կամավորական վաշտ, որի ղեկավարները եղան Նժդեհն ու Անդրանիկը։ Ընթացքում վաշտը աչքի ընկավ մի շարք հաղթական կռիվներ ով և 1913-ին զորացրվեց՝ հրաժարվելով մասնակցել բալկանյան ժողովուրդների ներքին ՝ թուրքանպաստ պատերազմին։

1918-ի մայիսին վճռվում էր հայոց ճակատագիրը։ Ալեքսանդրապոլում կռվի բռնվելով թուրքական զորքերի դեմ , Նժդեհը իր խմբով նահանջում է Ղարաքիլիսա։ Այստեղ էին նահանջել բազմահազար հայ փախստականներ։ Ահա այս օրհասական պահին, երբ տիրում էր համատարած հուսալքում, լսվում է Նժդեհի ռազմաշունչ, ամենափրկիչ ձայնը. եկեղեցու բակում նրա արտասանած ճառը հոգեփոխեց հուսալքված, բայց ոգեշունչ խոսքի կարոտ

հայերին և նրանց առաջնորդեց դեպի սրբազան ճակատամարտ։ «Դեպի՛ ճակատ, այնտեղ է մեր փրկությունը,- կինչեր Նժդեհի հուժկու, վճռական և ինքնավստահ ձայնը»։ Ղարաքիլիսայի եռօրյա հերոսականով հայությունը հաստատեց իր հարատևելու կամքը, և այդ հավաքական կամքի զորացման գործում, անշուշտ, անուրանալի է Նժդեհի դերը։ Ղարաքիլիսայում վարած կռիվների համար Նժդեհը արժանացել է ամենաբարձր քաջության շքանշանի։

Առանց դրսի օժանդակության, ապավինած հայրենի լեռներին ու սեփական ուժի զորությանը, Սյունիքի հայությունը, Նժդեհի ղեկավարությամբ, վարեց իր հաղթական դյուցազնամարտը։ Լեռնահայության դիմումներին որևէ կերպ օգնելու, ՀՀ կառավարությունը, բացի մեկումեջ արվող քաջալերաքի ու համակրանքի խոսքերից, ոչ մի կերպ չարձագանքեց։ Այդ ծանր օրերին էր , որ Նժդեհը գործի դրեց Դավիթբեկյան Ուխտերը, որոնց նշանաբանն էր «Հանուն հայրենիքի՝ Դավիթ Բեկաբար»։ Դավիթբեկյան Ուխտերի օրինակով էր, որ Նժդեհը հետագայում հիմնադրեց *Ցեղակրոն* *Ուխտերը*։ Սակայն պայքարը երկար շարունակվել չէր կարող , քանի որ մի կողմից՝ Վրաստանի ու Հայաստանի բոլշևիկացումը, նահանջող մտավորականության և երիտասարդության վաղաժամ անցնելը Պարսկաստան բարոյալքիչ ու հոռի ազդեցություն ունեցավ լեռնահայությանը վրա , մյուս կողմից էլ հացահատիկի չգոյությունը , վարչական ու զինվորական մարմինների միջև առաջ եկած տարաձայնությունները խթան հանդիսացան , որ 1921թ հուլիսին Լեռնահայաստանում, որը ամբողջ Անդրկովկասում միակ շրջանն էր, որտեղ չէր հաստատվել խորհրդային կարգեր , խորհրդայնացվի։

Թողնելով Զանգեզուրը՝ Նժդեհը հրաժեշտից առաջ հավաստիացրեց, որ ինքը ընդմիշտ չի հեռանում և պիտի վերադառնա , եթե Երևանի փոխարեն Բաքուն լինի Սյունիք ոտք դնողը ։

Հայաստանի Հեղկոմին ուղղած իր դիմումը սպարապետն ավարտում էր սաստող տողերով «Դուք գիտեք, որ ցանկության դեպքում ես միշտ էլ հնարավորություն կունենամ մի քանի տասնյակ զինվորներով վերագրավել Լեռնահայաստանը։ Որպեսզի այս երկրի աշխատավորներ գյուղացիությունը ստիպված չլինի մեկ էլ ինձ օգնության կանչելու , աշխատեք բավարարել հայ գյուղացիության և նրա մտավորականության արդար պահանջը»։

Այսպիսով՝ 1921-ի հուլիսից Նժդեհը արդեն Թավրիզում էր։ Այս ընթացքում սրված էին հարաբերությունները Նժդեհի և Հ.Յ.Դ. բյուրոյի հետ , հետագա տարիների լարվածությունն էլ հանգեցրեց նրան , որ 1938թ-ին Հ.Յ.Դ. 13-րդ Ընդհանուր ժողովը Նժդեհին կուսակցության շարքերից արտաքսելու վճիռ ընդունեց ՝ «պառակտող գործունեության » որակումով։

Կուսակցությունից հեռանալուց հետո , Նժդեհը Հայկ Ասատրյանի հետ շարունակում է Ցեղակրոն կազմակերպությունների ընդլայնումը ։

Շուտով պայթում է 2րդ աշխարհամարտը, և Նժդեհը առաջնորդվելով «գերմանական գայլին կուշտ պահելու և հայ գառնուկին փրկելու » քաղաքական սկզբունքով՝ համագործակցում է նացիստների հետ ։ Նրա համագործակցությունը նացիստների հետ նախ և առաջ եղել է

Ա) գաղթաշխարհի հայությանը գերմանական սպառնալիքից փրկելու մտահոգությամբ,

Բ) հակաթուրքական հողի վրա։

1944թ-ին «Սմերշ» (ռուսերեն смерть шпионам բառի հապավումն է) բանակային հակահետախուզական վարչության կողմից ձերբակալվում է ։ 1948-ին Նժդեհը Երևանում դատապարտվում է 25 տարվա բանտարկության ։

1955թ-ի դեկտեմբերի 21-ին Նժդեհը մահանում է Վլադիմիրի բանտում ։

Ստանալով մահվան լուրը՝ եղբայրը՝ Լևոն Տեր-Հարությունյանը շտապ մեկնում է Վլադիմիր: Նրան հանձնում են եղբոր զգեստն ու ժամացույցը, իսկ ձեռագրերը՝ ոչ: Թույլ չի տրվում նաև մարմինը տեղափոխել Հայաստան:

1983թ-ին Նժդեհի աճյունը Վլադիմիրից տեղափոխվում է Երևան : Աճյունից մի նշխարհ ամփոփվում է Խուստուփ լեռան լանջին՝ Կոզնի կոչված աղբյուրի մոտ, իսկ հիմնական աճյունը, ցինկի արկղի մեջ մի քանի տարի պահելուց հետո, 1987թ-ին հանգրվանում է Գլաձորի Սպիտակավոր վանքի բակում :

Իր մահից տասնամյակներ անց միայն՝ 1992-ին, Նժդեհը արդարացվեց, ինչի կարիքը երբևէ չուներ: Ցեղակրոն շարժման գաղափարաբանությունը Ցեղակրոնությունն է: Անշուշտ, Ցեղակրոնությունը գաղափարական դատարկության վրա չէր ստեղծվում: Դրան նախորդել էին Ալիշանի, Ռաֆֆու, Պատկանյանի, Վարուժանի և այլոց ցեղային գաղափարները: Սակայն նրանք ստեղծել էին լոկ ցեղային գաղափարներ, բայց ոչ՝ գաղափարախոսություն: Նժդեհին էր վիճակված, խտացնելով ու ամփոփելով իր մեջ մինչ այդ եղած Հայ ցեղային միտքը, համակարգելով ու ամբողջացնելով այն, հիմք դնել հայկականորեն հիմնավորված ՝ Հայի էության և բարոյականի վրա կառուցված մի ուսմունքի , որը կոչվեց Ցեղակրոնություն: Ըստ Նժդեհի Ցեղակրոնությունը առաջին հերթին Հայ ծնված լինելու գիտակցումն ու հպարտությունն է ,այդ ծնունդին անմնացորդ նվիրվելու և ցմահ հավատարիմ մնալու ուխտը :

Ցեղակրոնությունը ազգի առանցքն է, այլ կերպ ասած հիմքը, որի շուրջը հավաքվում է մնացած ազգային գաղափարախոսությունները: Յուրաքանչյուր հայ , ով ըմբռնում է ցեղակրոն գաղափարը, նա ամբողջովին իր մեջ կրում է ազգային արժեհամակարգը: Սա սեփական ազգի արժանապատվության և ինքնաճանաչման միակ ճիշտ ճանապարհն է ,ուստի օր առաջ պետք է վերադառնանք այս գաղափարին: Տվյալ դեպքում Նժդեհը ավելի քան կատարյալ անվանում էր ստեղծել Ցեղը կրելու առաքելություն՝ ցեղը և ցեղի արժեքները , նրա ազգային որակները , բարոյականը, հոգեբանականը:

Ցեղակրոնիզմը այդ ժամանակներում որոշ քաղաքական ուժեր փորձեցին վարկաբեկել՝ զուգահեռներ անցկացնելով ֆաշիզմի հետ: Բայց Նժդեհը

չափազանց մեղմ կերպով հակադարձեց , որ ֆաշիզմ կոչվածը 30-ականների, հիվանդ հոգեբանությամբ օժտված քաղաքական-հասարակական գործիչների ստեղծածն է: Ֆաշիզմի հետնորդները փորձում էին ոտնահարել այլոց արժանապատվությունը: *«Հիտլերը իր անստույգ բնորոշմամբ Արիական ցեղը համարում է միակ մշակութաստեղծ ռասան, իսկ մնացած ազգերին՝ ստորադաս տեսակներ»*[3] : Փաստորեն ֆաշիստները այլոց ազգայինը ոտնահարելով էին գերադասում իրենց ազգայինը:

Մինչդեռ ցեղակրոնիզմը դա ընդամենը սեփական ազգի արժանապատվության գիտակցումն է , առանց որևէ ազգի նվաստացնելու:

«Հիտլերը, այսպես կոչված «կենսական տարածքների» անհրաժեշտությամբ փորձում էր հիմնավորել ծավալապաշտությունը ,որը անբնականորեն դուրս էր գալիս հայրենիքի սահմաններից :

Նժդեհը խնդիր է դնում մեր բու՛ն հայրենիքի՝ Հայկական բարձրավանդակի վերատիրումը: Միայն թե Նժդեհի և Հիտլերի գաղափարախոսությունների միակ նմանությունը սոսկ այն է , որ երկու դեպքում էլ իբրև գերակա արժեք հռչակված է ցեղը, ինչը բնորոշ է ցանկացած ազգապաշտական կամ ցեղապաշտական ուսմունքի»: Բացի դրանից Ցեղակրոնությունը որոշ հոգևորականների ու հասարակական քաղաքական գործիչների կողմից, որոնց կարելի է տալ հակազգային գործիչներ անվանումը ,եկան այն համոզմանը, որ դա ինչ-որ հակակրոնական բնույթ ունի: Սա ոչ այլ ինչ է քան տերմինի ոչ ճիշտ ըմբռնում , ըստ այդ անձանց ցեղը չի կարող կրոն լինել առանց իսկ ըմբռնելու, որ կրոն դա կրել իմաստն է արտահայտում : Ցեղակրոնությունը կրոն չէ: Այն գերազանցապես աշխարհիկ ուսմունք է, իսկ եթե կրոն է, ապա դա կրոնն է ցեղային հպարտության, ուժի և արիության ...»: «Նժդեհը հին հավատքին վերադառնալու կոչ չի անում , քանզի հասկանում է դրա միամտությունն ու հնարավոր վտանգավոր հետևանքները: Այնուհանդերձ, նա չի թաքցնում իր համակրանքը դեպի հայոց հին կրոնն և մեր հեթանոս անցյալը: Լսենք իրեն.«Այս կամ այն ցեղը մոտավոր ճշտությամբ դիմագծելու համար, նրան պիտի դիտել իր հոգու հայելիի՝ իր կրոնի մեջ...»: Նա հիացմունքով է խոսում նախաքրիստոնեական հայու անգերազանցելի

մարդկության և բարձրորեն ասպետական ոգու մասին»: Ահա ևս մի անհիմն վարկաբեկում. ըստ որոշների Նժդեհը, ուսմունքի անունը դնելով Ցեղակրոնություն, հայերին տվեց նախամարդուն բնորոշ հատկանիշներ, քանի որ միայն նախնադարյան հասարակությանն էր բնորոշ ցեղ տերմինը : Սա ոչ այլ ինչ է քան տգիտության վառ դրսևորում: Նախ լսենք Նժդեհի խոսքերը….«Գիտե՛նք, հասարակագիտական այդ պարզ ճշմարտությունը,սակայն անկարելիության աստիճան դժւար է, բառերով «ի՞նչ է ցեղը» հարցի սիրտը շօշափել:

Մարդաբանութեան ցարդ գրած սահմանումներից և ո՛չ մեկն էլ ընդունելի ինձ համար: «Ցեղ» հասկացողությունը սահմանելու համար, բաւական չեն հին եզրերը(տերմին): Նրանցով չի կարելի սպառել ցեղի ողջ տարողությունը:

Ցեղը՝ դիմագծօրէն ազգայինն է, ա՛յն տիպարականը, որով ժողովուրդները տարբերվում են իրարից: Ըստ մեզ-ասենք առանց տեսական խորացումների՝ ցեղն աւելի հոգի է , քան կաւ»:

Փաստորեն ցեղային գործոնն ավելի բարդ իրողություն է, քան ենթադրում ենք և այս պարագայում յուրաքանչյուրիս կողմից դժվար է դա սահմանել գիտական լեզվով: Կարծում եմ այսքանից հետո հիմնական թերմբռնումները և անհիմն դատափետումները կվերանան: Հիմնական գաղափար կկազմենք շարժման մասին , քանզի Ցեղակրոն ուսմունքը կարող է վարկաբեկել միայն նա , ով թեկուզ չնչին տեղեկույթ չունի ուսմունքի մասին: Այսքանից հետո հարկ է նշել նաև, որ այդ ժամանակներում վարկաբեկման հիմնական պատճառներից էր նաև նախանձախնդրությունը, քանզի այն ազգանվեր և դժվարին աշխատանքը, որը կատարում էին Ցեղակրոնները, դա չէին կարողանում կատարել մի շարք ազգային կուսակցություններ, կազմակերպություններ և հենց վերջիններիս կողմից էլ արժանանում էին քննադատման:

Ցեղակրոն շարժումը ստեղծվեց 1930 ական թվականներին Ամերիկայում:Բայց որպես այնպիսին ձևավորվել է ձևավորվել է հայրենի հողի վրա 1919-21 թվականների Սյունիքի մարտերի ժամանակ: Այժմ մանրմասնորեն. գիտական հոգեբանությունը վաղուց է ապացուցել, որ մեծ աղետներ տեսած, արհավիրքների ենթարկված ժողովուրդները տառապում են հոգեկան հետընթացով: Դա

արտահայտվում է պարտվողականության տարբեր դրսևորումների ձևով։ Նախ և առաջ նրան պատում է թերարժեքության տանջալի զգացումով, որի պատճառով դառնում է վատատես , մշակույթի առումով անստեղծագործ, իսկ հոգեպես ՝ անձնապաշտ, փոքրհոգի։ Նրան սկսում է հետապնդել սոսկ մի նպատակ- օրեկան հացի ու հանգստի ապահովում։ Այսպիսով այս ամենը հանգեցնում է կործանման բառի լայն ու խորը իմաստով։Նա այլևս անընդունակ է պայքարի և սկսում է քարշ տալ իր անիմաստ ու անստեղծ գոյությունը՝ հարուցելով իր հանդեպ ազգերի զզվանքն ու խղճահարությունը։ Հնարավոր է փոքր -ինչ զարմանալի թվա ,բայց այս ամենի հետևանքն էր նաև հայկական գաղթօջախներում բազմաբնույթ և անհեթեթ աղանդների առաջացումը ։Այժմ աղանդներից մի քանիսը . «Ռուհչիներ» , որոնք իրենց հոգու փրկության համար քարոզում էին հրաժարվել ազգային-հասարակական կյանքից, «անդենականներ», որոնք հայերի երկրային կյանքը համարելով անիրական՝ հորդորում էին նվիրվել երկնային հայրենիքին, «վերամկրտչականներ»՝ նույնքան ապազգային, հակահասարական , հիվանդագին։ Փաստորեն նրանք, տրվելով կույր պարտվողականության, իրենց այս անգիտակից քայլերով, սկսել էին ջուր լցնել հայ ժողովրդի թշնամիների ջրաղացին։ Մի խոսքով,այսպիսի աղետալի վիճակ էր տիրում հայ գաղթօջախներում ի ուրախություն թուրքերի ։

Ահա այս պարզ պատճառով Նժդեհը ապրում էր խորը ողբերգություն, և ի ուրախություն համայն հայության նրա տասնամյակների մտորումներն ու ուսումնասիրություններն հանգեցրին այն ճշմարտությանը, որ պարտվողականությամբ տառապող ժողովուրդները անբուժելի չեն, այսինքն հնարավոր է նրանց դարձի բերել ։ Իսկ դա կարող է լինել միայն սեփական ազգային արժեքները վերապրելու եղանակով ։ Մեկնելով այս վերլուծությունից Նժդեհը հայրենասեր-գաղափարապաշտի խորին մտահոգությամբ ձեռնարկում է սփյուռքահայության վերադաստիարակումը։

Քանի որ գաղութահայության ամենամեծ զանգվածը ապրում էր ԱՄՆ-ում , բացի դրանից մյուս միջավայրների համեմատ ամերիկյանում առավել մեծ էր ձուլվելու հավանականությունը, այդ պատճառով Ցեղակրոն շարժումը ձևավորվեց

Ամերիկայում ։ Այսպես իրենց գործունեությունը տարածեցին Ցեղակրոնները։ Նրանք սփյուռքում իրենց վրա վերցրին անգլախոս դարձած հայերի մեջ ազգային ինքնությունը սերմանելու, հայոց լեզուն սովորեցնելու մի խոսքով ձուլման վտանգից հետ պահելու և դարձի բերելու դժվարին և առաջատար գործը։

Ինչպես նշում է Նժդեհն Ցեղակրոն շարժման առաջացումը պայմանավորված էր մի շարք կարևոր դրդապատճառներով ևս ։Թուրքերը՝ բարբարոս, բայց արթուն քաղաքական բնազդով օժտված մի ազգ, փորձեցին մեզ ոչնչացնել նաև բարոյապես։ Վերջիններս Եվրոպայում հակահայ քարոզչություն սկսեցին։ Հիմնական նպատակն էր Թուրքիայում կատարված ցեղասպանությունն արդարացնել կամ ծայրահեղ դեպքում , հասկանալի դարձնել։ Ինչի արդյունքը եղավ այն, որ եվրոպական ամբիոններից հաճախ հայտարարվում էր հետևյալը. «Իրենց անարգ բնավորության պատճառով հայերը դարձան թուրքերի նողկանքի, այլ ոչ թշնամության զոհերը»։ Դա կատարում էին թուրքական դեսպանություններ ու հյուպատոսություններն՝ իրենց ռազմական, առևտրական ու մամուլի կցորդների հետ։ Այս քարոզչությամբ հատկապես աչքի է ընկնում գրող Խալիդե համը, Վեհիբ փաշան և ԱՄՆ-ում թուրքական դեսպան Մուխտար բեյը։ Փաստորեն քարոզչությունը անհետևանք չանցավ . որոշ երկրներում խթանեց հակահայկականությանը։ Նման իրավիճակում Ցեղակրոն Ուխտերը ձեռնամուխ եղան հակաթուրքական քարոզչությանը՝ ի պաշտպանություն մեր անարգվող Ցեղի։ Նրանք հավաքեցին տարբեր փիլիսոփաների, մարդաբանների, աշխարհագետների արտահայտած կարծիքներ հայերի ու թուրքերի մասին և ներկայացրին ամերիկյան ու կանադական ժողովուրդների դատին։Կար Ցեղակրոն շարժման ևս մի կարևորագույն հանգամանք.Մեր հին կուսակցությունները սկսել էին մոռացության տալ Հայկական հարցն ու համակերպվել այն մտքի հետ , որ պետք է հրաժարվել Թուրքիային անցած հայկական տարածքներից։ Ցեղակրոն շարժումը կոչված էր հայությանը տեր դարձնելու Թուրքիայից ունեցած տարածքային պահանջներին։ Ցեղակրոնները, ի հակակշիռ հին սերնդի, շարունակում են մնալ Թուրքիայի պարտատերը։ Նժդեհի ցեղապաշտ ուսմունքը մոտավորապես ունի մեկդարյա վաղեմություն(Ուսմունքը ձևավորվել է հայրենի

հողի վրա, Զանգեզուրյան ինքնապաշտպանական մարտերի ժամանակ , իսկ որպես այդպիսին լայն տարածում է գտել 1930-ականներին Ամերիկայում): Այն ընդունելով իբրև հաղթանակի զորույթ և ազգային-բարոյական արժեքների համախմբման տարբերակ՝ աներկբայորեն ուսմունքը համարում ենք ազգային գաղափարախոսություն: Գաղափարախոսություն, որը կարող է ազգին համախմբել, վերադաստիարակել, ազգայինը կորցնելու վտանգից զերծ պահել: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է վերլուծել՝ հասկանալու համար, թե որքանով է ուսմունքը արդիական 21-րդ դարի հայ **երիտասարդության** շրջանում և որքանով է ուսմունքի չափանիշները համապատասխանում ներկա մտածողությանը : *Ինչու՞ շեշտս դրեցի երիտասարդություն բառի վրա:* Այն պարզ պատճառով, որ երիտասարդության մեջ պետք է փնտրել փրկությունը այն երիտասարդության որոնց ճնշող մեծամասնությունը մեր օրերում եվրոպամետ է. հեշտությամբ ընդունում է այլազգիների մշակութային տարրերը, կենցաղը, վարք ու բարքը : Միաժամանակ ազգայինը (կենցաղ, մշակույթ, երգուպար, ծեսեր, տոներ, ադաթներ և այլն) համարում է որոշ չափով հետամնաց: Վերջին մի քանի տարիների ընթացքում երիտասարդության մեջ մի փոքր դրական շարժ է նկատվում : Սերնդից մի փոքր զանգված անցում է կատարում դեպի ազգային-ավանդականը: Հետևաբար՝ երիտասարդ սերնդից է կախված կլինի՞ Հայաստան, թե՞ չի լինի:Իսկ երիտասարդությանը համախմբելու և ազգային արժեքներով վերադաստիարակելու ուղենիշը Նժդեհյան գաղափարախոսությունն է , որտեղ Ցեղը իր նյութական ու վերացական կողմերով գերագույն սրբություն է համարվում և իր մեջ կրում է ազգի հոգևոր արժեքները, հզորությունը և կամքը: Իսկ ինչ մնում է արդիական լինելուն, ապա ցանկացած ժամանակում և ցանկացած դեպքում ազգայինը յուրաքանչյուր ազգի համար պետք է արդիական լինի:

Խոսել Նժդեհի և Ցեղակրոնության մասին և չանդրադառնալ իր հավատարիմ ընկերոջն՝ Հայկ Ասատրյանին և Տարոնականությանը՝ կարծում եմ անկարելի է :

Ցեղակրոնությունից սկիզբ առավ մեկ այլ գաղափարախոսություն, որը կարելի է անվանել վերջինիս շարունակությունը:Երկու գաղափարախոսությունների աշխարհայեցողության հիմքում էլ ընկած է Ցեղն իր ամբողջական

ընկալմամբ։Տարոնականությունը ցեղի մարմնական ու հոգեկան հատկանիշների (արյան ու ոգու) փոխադարձ ազդեցությունն ընդունում է որպես բնածին ճշմարտություն։ Տարոնական շարժումը հիմնադրվել է 1937-1938 թվականներին Գարեգին Նժդեհի, Հայկ Ասատրյանի, Ներսես Աստվածատուրյանի և նրանց գաղափարակիցների կողմից։ Հայ հեղափոխական դաշնակցությունից նրանց հեռացումով Ցեղակրոնության գաղափարակիրների շարքերում սկսվեցին որոշակի տարաձայնություններ։ Ամերիկայի Միացյալ Նահանգների Ցեղակրոն Ուխտերը, այլևս չէին ընկալվում որպես համահայկական կառույցի հիմք։ Այս և նմանատիպ տարաձայնությունների պատճառով անհրաժեշտություն կար ստեղծել համահայկական նոր շարժում։

Տարոնական ոգու առաջնորդները սահմանում են այն հատկանիշները, որոնք պարտադիր են Ցեղի անունից հանդես եկող հայ անհատների ու կազմակերպությունների համար.

ա) Ցեղի ու Հայրենիքի համար մեռնելու բացարձակ կամք

բ) Ցեղային հավիտենականի խոր զգացում

գ) Ներցեղային բարոյական

դ)Հաղթական ոգի

ե) Պատմական ճակատագրի խոր ճանաչողություն

զ) Հայրերի գործի ու նպատակի հաղորդություն

է) Հայրենազգացություն

ը) Օտարությունը որպես գերագույն դժբախտություն ապրելու առաքինություն

թ) Մեծագործության կամք ու բարոյական [12]

Գաղափարախոսության հիմնադիրներն այն անվանել են Պատմական Հայաստանի Տարոն գավառի անվամբ։ Այդպիսի անվանադրման համար նրանք ներկայացրել են մի քանի պատճառ։ Դրանք են՝ այնտեղ է եղել հեթանոսական Հայաստանի հոգևոր կենտրոնը,

- այնտեղ է ստեղծվել Սասնա Ծռեր դյուցազնավեպը,
- այնտեղ են ծնվել Մեսրոպ Մաշտոցն ու Մովսես Խորենացին,
- այնտեղ է հաստատվել Մամիկոնյան նախարարական տոհմը,

այնտեղ է եղել արևմտահայ նորագույն ազատագրական պայքարի կենտրոնը։ Վերը թվարկած պատմական իրողություններն պարզապես պատմական համընկնումներ չեն, այլ տարոնական ոգեղենության արտահայտություններ։ Տարոնականության հիմնադրման անհրաժեշտությունը պայմանավորված էր նաև այն հանգամանքով, որ Ցեղակրոնությունը խորապես չէր հստակեցնում մի շարք առանցքային հարցեր, ինչպիսիք են արարչագործության և ոգու վերաբեյալ հարցերը։ Միևնույն ժամանակ Հայ առաքելական եկեղեցին Ցեղակրոնության նկատմամբ որոշակի բացասական վերաբերմունք ուներ և Հայկական սփյուռքում հանդիսանում էր բավականին ազդեցիկ ուժ։ Այս
հանգամանքը նույնպես խնդիրներ էր ստեղծում Ցեղակրոնության տարածման գործում։Տարոնականության հիմնադրման գործում առանցքային դեր ունեցավ Բուլղարիայի Ցեղակրոն կազմակերպությունը Գարեգին Նժդեհի, Հայկ Ասատրյանի և Ներսես Աստվածատուրյանի ղեկավարությամբ։ 1937 թվականի փետրվարի 7-ից Պլովդիվում սկսում են հրատարակել «Ռազմիկ» թերթը, որի էջերում նույն թվականից սկսեցին տպագրվել Տարոնական շարժման մասին տեղեկություններ։ Նոր ստեղծված շարժման հենարանը հանդիսացավ 1917 թվականին ԱՄՆ-ում հիմնադրված Տարոն-Տուրուբերանի հայրենակցական միությունը։ Այն մեծ ազդեցություն ուներ Հայկական սփյուռքում և հայկական համայնքներում հանդիսանում էր Ցեղկարոն շարժման շարժիչը։

ԳԼՈՒԽ 2. Արժեհամակարգի ձևավորումը պատմության դասավանդման ընթացում

Արժեհամակարգ հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ընկալվում է լայն իմաստով:Առավել ընդունված է այն տեսակետը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբ է: Սովորողների արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և աքնփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները,բայց հատկապես անգնահատելի է հումանիտար առարկաների՝ պատմություն,հայոց լեզու և գրականություն առարկաների դերը: Իսկ ակտիվ ճանաչողական գործնեության սովորողների մեջ ձևավորում է հայրենասիրություն, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում: Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումը պայմաններում ձևավորված գիտելիքները սովորողների մոտ վերածվում են համոզմունքների և կարողությունների:Այսօր մատաղ սերնդի դաստիարակության գործընթացն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո, հաշվի առնելով այս հանգամանքները՝ ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային արժեհամակարգի ձևավորումը սեփական ժողովրդի պատմության և մշակույթի հենքի վրա:

1.Սովորողների արժեքների ձևավորման վրա ազդող գործոններից են ավանդական միջոցները:Այս առումով իրավացի է Մոնտենը , երբ ասում է, որ մենք որքան ասես կարող ենք պնդել մերը, սակայն համընդհանուր կանոնները մեզ քարշ են տալիս իրենց հետևից[9]:

2.Սովորողների արժեքների ձևավորման վրա ազդող գործոններից են տարիքային գործոնը:Սովորողի վրա վրա կարող է ազդել տնօրենը, դասղեկը, առարկայական ուսուցիչները:Սովորողը նրանցից կարող է ստանալ արժեքների վերաբերյալ ինչպես դրական այնպես էլ բացասական կարծիք: Ուստի շատ կարևոր է ուսուցչի

բարոյական կերպարը:Սովորողների արժեքների ձևավորման վրա ազդում են ոչ միայն ընտանիքը, այլ նաև ուսումնական հաստատությունը: Ուսուցիչը հնարավորություն է ստանում առարկայական ծրագրերի ուսուցման միջոցով սովորողների մեջ սերմանել քաղաքական, իրավական, բարոյական, գեղագիտական վերաբերմունք և գիտելիք:

Սովորողների անձի արժեքների ձևավորման առումով հանրակրթության մեջ ուրույն նշանակություն ունի Հայոց պատմություն առարկան:Առարկան հնարավորություն է տալիս հարուստ և հազարամյակների պատմության յուրացման ընթացքում ձևավորել ազգային մտածողություն, պատմական հիշողություն, ազգասիրություն, լեզվի, մշակույթի, կրոնի, պետականության գաղափարի պահպանման կարևորությունը:

Արժեքների բուրգի գագաթին գտնվող նվիրական ու մեծագույն արժեքի՝ հայրենասիրության զգացումը դաստիարակելու համար Հայոց պատմություն առարկան բազմաթիվ հիանալի հնարավորություններ է տալիս:Ազգասիրությունը և հայրենասիրությունը այն մեծագույն արժեքն է, որ հարգանք և ակնածանք է հարուցում, նույնիսկ երբ դրսևորվում է հակառակորդի կամ թշնամու մոտ:

Ուսուցման ընթացքում վերցնում են պատմական որևէ կերպար՝ նրա կյանքը, գործնեությունը, գաղափարները և դրանց հետևանքները՝ այս դեպքում Գ.Նժդեհինը:Ինքնուրույն լրացուցիչ նյութեր հավաքելու և հետազոտելու դեպքում, սովորողները տվյալ թեմայի վերաբերյալ կունենան ամբողջական գաղափար և պատկերացում:Հաջորդ մեթոդը, որը կօգնի դասավահդման ընթացքում ցեղակրոնությունը որպես արժեհամակարգի ձևավորմանը պատմությունը դատարանի առջև մեթոդն է:Սա հիանալի միջոց է սովորողների ինքնուրույն կամ համագործակցային հետազոտական հմտությունների ու քննադատական մտածողության և արժեհամակարգը զարգացնելու:Հատկապես կիրառելի է ծավալուն թեմաների դեպքում:Այս դեպքում պատմության դատարանի առջև կանգնելու է Ցեղակրոնությունը:

1.Ներկայացնելու ենք այն բոլոր մեղադրանքները և թյուրըմբռնումները, որոնք գոյություն ունեն:

2.Վիճակահանությամբ սովորողների մի մասը պետք է հանդես գան որպես պաշտպաններ, մյուսները՝ մեղադրողներ՝ իսկ երրորդը՝ դատավորներ:

3.Սովորողները թեմայի վերաբերյալ բերում են հստակ փաստարկներ:Սողորողներին նախապես հավելյալ նյութեր էին հանձնարարվել, որպեսզի մեղադրական կամ պաշտպանական տեքստերը ավելի հիմնավոր ներկայացնենն:Դատավորի դեր ստանձնած խմբի սովորողները պետք է համադրեն երկու կողմերի փաստարկները:Կարող ենք խնբավորել փաստարկները և նշել, թե դրացից որն է ավելի հիմնավորված:

Դերային խաղի միջոցով ձեռք բերված գիտելիքը պահպանվում է երկար, այն գիտելիքների և հմտությունների ձեռք բերման հիանալի միջոց է, նպաստում է նաև միջանձնային հարաբերությունների ձևավորմանը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Յուրաքանչյուր դասի ընթացքում ուսուցիչը որոշակի դաստիրարակչական խնդիր է լուծում ՝ հաշվի առնելով տվյալ առարկայի թեմայի հիմնական խնդիրները, որոնք ներկայացված են առարկայական ծրագրերում:Ուսուցիչը ուսուցման կազմակերպման ընթացքում՝ անհատական, խմբային, էքսկուրսիաներ, դասղեկական ժամեր, այս մեթոդները առավել արդյունավետ է դարձնում սովորողների արժեհամակարգի ձևավորումը:

Ելնելով վերոհիշյալից կարող ենք եզրակացնել, որ արժեքային համակարգի ձևավարումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է և մշտապես պետք է լինի մանկավարժների ուշադրության կենտրոնում մատաղ սերնդի

դաստիարակության ընթացքում:

Մատաղ սերունդը լեռներից իջնող ահեղ հեղեղ է, որը կարող է և օրհնաբեր, և ավերիչ լինել:

Հետևաբար նրանցից է կախված կլինենք, թե չենք լինի:

Գրականության ցանկ

1)Գ.Նժդեհ «Հատընտիր» , Երևան «Հայաստան» հրատարակչություն, 2001թ : Ընդհանուր 403 էջ ։
2) Մ. Լալայան Ցեղակրոն շարժումը (պատմություն և գաղափարախոսություն), հրատարակիչ՝ ՀՀԿ , ընդհանուր էջերի քանակ՝ 48։
3) «Գարեգին Նժդեհի ուսմունքը և նրա արդիականությունը» (հոդվածների ժողովածու), հրատարակիչ՝ ՀՀԿ , Երևան -2009, էջերի քանակ՝ 146:
4) Տարոնական շարժումը (պատմություն գաղափարախոսություն),հրատարակիչ՝ ՀՀԿ , Երևան-2002թ, 27 էջ։
5.Սուխոմլինսկի Վ.Ա.., Սիրտս նվիրում եմ երեխաներին, Երևան, 1975թ